Rostelecom

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԹԻՎ C2602

ք. Աբովյան

«14» Նոյեմբերի 2022թ.

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Օպերատոր), որի գլխավոր գրասենյակը գտնվում է Հայաստանի Հանրապետություն (այսուհետ՝ ՀՀ), Կոտայքի մարզ, ք. Աբովյան 2201, Խաղաղության փ. 1 հասցեում, և որը պատշաճ կերպով լիցենզավորված է ՀՀ տարածքում ստեղծել և շահագործել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանց (Լիցենզիա թիվ 0494, տրված՝ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի թիվ 686Ա առ 10.12.2008թ. որոշմամբ), ի դեմս գլխավոր տնօրեն Հ. Ֆարամազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) որի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 26 շենք հասցեում, ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ հղումը տեքստում Օպերատորին և Պատվիրատուին կլինի նաև «Կողմեր»), կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Օպերատորը, համաձայն սույն Պայմանագրի պայմանների, Պատվիրատուին մատուցում է էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն կամ Ծառայություններ), որոնք նկարագրված են Պատվիրատուի կողմից լրացված և Օպերատորի կողմից հաստատված մեկ կամ ավելի պատվեր-հայտ(եր)ում (այսուհետ՝ Պատվեր-Հայտ կամ Պատվեր-Հայտեր):

1.2. Պատվեր-Հայտը առանց սահմանափակումների պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

- Ծառայության տեսակը/նկարագիրը,
- Ծառայության մատուցման հասցեն/վայրը,
- Թողունակությունը
- Ծառայության կազմակերպման սխեման
- Ծառայության ժամկետը
- Ծառայության սակագինը
- Վճարումների ժամանակացույցը

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Այն դեպքում, երբ Ծառայությունը մատուցվում է Օպերատորի կողմից տրամադրվող մալուխով, մալուխը ավարտվում է Պատվիրատուի կողմից նշված գրասենյակում/շենքում/շինությունում, Պատվիրատուն պատասխանատու է մալուխի շենք/շինություն մտնելու և շենքում/շինությունում մալուխի անցկացման թույլտվությունների ձեռքբերման համար:

2.2. Օպերատորի կողմից տրամադրվող վերջնակետային սարքավորումը (ակտիվ կամ պասիվ սարքավորում), մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը, ինչպես նաև դրանց վրա Օպերատորի կողմից կատարված ցանկացած փոփոխություն և վերանորոգում, եթե այլ բան գրավոր ձևով համաձայնեցված չէ Կողմերի միջև, համարվում է Օպերատորի սեփականությունը: Պատվեր-Հայտերի լուծման դեպքում Օպերատորի կողմից տրամադրված վերջնակետային սարքավորումը և մալուխը վերադարձվում են Օպերատորին անկախ դրա լուծման պատճառ(ներ)ից, իրենց սկզբնական վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

2.3. Սույն Պայմանագրի 2.2 կետում նշված սարքավորումները և մալուխը հանձնվում են Պատվիրատուին և վերցվում են նրանից Կողմերի միջև կազմված Սարքավորումների հանձնման-ընդունման ակտով:

2.4. Իր կողմից տրամադրված սարքավորումների վրա Օպերատորն իր հայեցողությամբ կարող է դնել կապարակնիք: Այդ դեպքում Պատվիրատուն իրավունք չունի հեռացնել այն: Պատվեր-Հայտի լուծման դեպքում Պատվիրատուն պարտավոր է վերադարձնել սարքավորումը՝ իր վրա տեղադրված չվնասված և ամբողջական կապարակնիքով: Պատվիրատուի կողմից սարքավորման և/կամ կապարակնիքի վնասման դեպքում Օպերատորն իրավունք ունի պահանջել Պատվիրատուից սարքավորումների հանձնման-ընդունման ակտում սահմանված գումարի չափով վճարելու այն կապարակնիքի և/ կամ սարքավորման համար, որը հեռացվել կամ վնասվել է:

2.5. Այն դեպքում, երբ Պատվիրատուն ունի իր սեփական վերջնակետային սարքավորումը, որը Օպերատորը համարում է պատշաճ, վերջինս Պատվիրատուի մոտ վերջնակետային սարքավորում չի տեղադրում:

2.6. Սույն Պայմանագրում սկզբնական ժամկետ է համարվում այն ժամկետը, որը Պատվիրատուն նշում է Պատվեր-Հայտում (այսուհետ՝ Սկզբնական Ժամկետ):

2.7. Սույն Պայմանագրում հերթական ժամկետը Պատվիրատուի կողմից տրված Պատվեր-Հայտում նշված Սկզբնական Ժամկետի ավտոմատ կերպով երկարաձգված ժամկետն է (այսուհետ՝ Հերթական Ժամկետ):

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Օպերատորն իրավունք ունի՝

3.1.1. Փոխել Ծառայության սակագինը մինչև Պատվեր-Հայտ(եր)ի Սկզբնական Ժամկետի կամ Հերթական Ժամկետի ավարտը՝ այդ մասին գրավոր ծանուցելով Պատվիրատուին սակագնի փոփոխությունը ուժի մեջ մտնելուց ոչ պակաս, քան 30 (երեսուն) օրացուցային օր առաջ:

3.1.2. Փոխել Ծառայության սակագինը մինչև Պատվեր-Հայտ(եր)ի Սկզբնական Ժամկետի կամ Հերթական Ժամկետի ավարտը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին սակագնի փոփոխությունը ուժի մեջ մտնելուց ոչ պակաս, քան 5 (հինգ) օրացուցային օր առաջ, եթե տվյալ Պատվեր-Հայտի գործողության ժամկետի որևէ 10 (տասը) հաջորդական օրերի ընթացքում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը ավելի քան 10%-ով փոխվել է այդ Պատվեր-Հայտի Սկզբնական Ժամկետի առաջին օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հրապարակված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքից: Սակագնի այդպիսի փոփոխությունը պետք է կատարվի նույն տոկոսաչափով, կամ ավելի պակաս տոկոսաչափով, ինչ տոկոսաչափով որ փոխվել է ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը: Սույն կետի նպատակներով տասը օրվա ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը պետք է հաշվարկվի այդ օրերից յուրաքանչյուրի դրությամբ ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հրապարակված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքների գումարը 10-ի բաժանելու ճանապարհով: Սույն կետը գործում է միայն ինտերնետ հասանելիության ծառայության համար:

3.1.3. Ժամանակավորապես կասեցնել Ծառայությունների մատուցումը, եթե համարում է, որ այդպիսի քայլը անհրաժեշտ է պաշտպանելու համար իր ցանցը կամ իր հաճախորդների ցանցերը որևէ վնասակար ազդեցությունից և վերականգնել Ծառայությունները միայն իր ցանցի և/կամ իր հաճախորդների ցանցերի վրա այդպիսի ազդեցության պատճառների վերացումից հետո:

3.1.4. Ծանուցելով առնվազն մեկ օր առաջ՝ Պատվիրատուի ներկայացուցչի ուղեկցությամբ աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերին մուտք գործել Պատվիրատուի գրասենյակ/շենք/շինություն: Եթե համապատասխան մուտքի իրավունք չի տրամադրվել, ապա Օպերատորը պատասխանատվություն չի կրում Ծառայության հնարավոր կորստի կամ վատթարացման համար:

3.1.5. Պայմանագրի և/կամ Պատվեր-Հայտի լուծման կամ գործողության ժամկետը լրանալու դեպքում, նախապես՝ առնվազն մեկ օր առաջ ծանուցելով, մուտք գործել Պատվիրատուի տարածք վերցնելու համար իր կողմից տրամադրված սարքավորումները և մալուխը:

3.1.6. Սույն Պայմանագրի 4.3 կետի վճարման պայմանների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարել տուգանք ուշացման յուրաքանչյուր օրվա համար՝ ուշացված գումարի 0,1%-ի չափով, սկսած վճարման վերջնաժամկետի հաջորդ օրվանից մինչև այն օրը, երբ գումարը կվճարվի ամբողջությամբ:

3.1.7. Սույն Պայմանագրի 4.3 կետի վճարման պայմանների խախտման դեպքում կասեցնել Ծառայությունների մատուցումը մինչև Պատվիրատուի կողմից 4.3 կետով նախատեսված պարտավորությունների կատարումը:

3.1.8. Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3.4.2, 3.4.3, 3.4.5, 3.4.6, 3.4.8 կետերի պայմանների խախտման դեպքում կասեցնել Ծառայությունների մատուցումը:

3.2. Օպերատորը պարտավոր է՝

3.2.1. Ծառայությունը մատուցել սույն Պայմանագրում ամրագրված պայմաններին և ժամկետներին համապատասխան:

3.2.2. Ապահովել Ծառայությունների տեխնիկական սպասարկումը՝ համաձայն սույն Պայմանագրի 13 կետում գրված "Հաճախորդի աջակցման" կարգի:

3.2.3. Տեղեկացնել Պատվիրատուին իր կողմում տեխնիկական անսարքության պատճառով առաջացած Ծառայության ընդհատման մասին:

3.2.4. Տեխնիկական պլանային աշխատանքների իրականացման դեպքում տեղեկացնել այդ մասին Պատվիրատուին այդպիսի աշխատանքները սկսելուց ոչ պակաս, քան 12 (տասներկու) ժամ առաջ: Հատուկ դեպքերում, երբ անհրաժեշտ է իրականացնել անհապաղ վերականգնողական աշխատանքներ, Օպերատորը կարող է տեղեկացնել Պատվիրատուին այդ աշխատանքները սկսելուց անմիջապես առաջ:

3.2.5. Բացառությամբ սույն Պայմանագրի 9-րդ բաժնում նախատեսված դեպքերի, տեխնիկական խափանումների և/կամ պլանային վերականգնողական աշխատանքների հետևանքով Ծառայության դադարեցման դեպքում ապահովել Ծառայության մատուցման վերականգնումն առավելագույնը 28 (քսանութ) ժամվա ընթացքում՝ տեխնիկական խափանման հայտնաբերման կամ պլանային վերականգնողական աշխատանքների իրականացման պահից հաշված:

3.2.6. Սույն Պայմանագրում սահմանված ժամկետներում ներկայացնել հարկային հաշիվներ և կանխավճարային վճարումների մասին հիշեցումներ:

3.2.7. Պահպանել Պատվիրատուի բարի համբավը և առևտրային իմիջը սույն Պայմանագրի գործողության ընթացքում և սույն Պայմանագրի լուծումից հետո:

3.2.8. Ծառայությունների մատուցման ավարտից հետո երեք օրվա ընթացքում իր միջոցներով ապամոնտաժել տեղադրված սարքավորումները:

3.2.9. Ապահովել աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության տեխնիկայի նորմերի և կանոնների պահանջների պահպանումը, ինչպես նաև Ծառայությունները մատուցել այնպես, որ խոչընդոտներ չառաջանան Պատվիրատուի բնականոն գործունեության իրականացման համար, ինչպես նաև չհակասեն Պատվիրատուի կողմից լրացուցիչ սահմանված և տվյալ տարածքում գործող ներքին անվտանգության պահանջներին, ինչպես նաև Եվրպական հեռարձակողների խորհրդի կողմից «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման վերաբերյալ սահմանված անվտանգության կանոններին:

3.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.3.1. Օպերատորից պահանջել Ծառայությունների մատուցումը սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան:

3.3.2. Փոխել մատուցվող Ծառայության ծավալը և/կամ Սկզբնական կամ Հերթական Ժամկետը՝ Օպերատորին ներկայացնելով նոր Պատվեր-Հայտ, որը, համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում, ուժի մեջ կմտնի 1) ոչ շուտ, քան գործող Պատվեր-

Հայտի Սկզբնական Ժամկետի ավարտից հետո, եթե ամսական վճարը, ըստ նոր Պատվեր-Հայտի ավելի փոքր է գործող Պատվեր-Հայտի ամսական վճարից կամ 2) Պատվիրատուի նշած ցանկացած օրվանից, եթե ամսական վճարը ըստ նոր Պատվեր-Հայտի ավելի մեծ է կամ հավասար գործող Պատվեր-Հայտի ամսական վճարից, իսկ նոր Պատվեր-հայտի Սկզբնական ժամկետը փոքր չէ գործող Պատվեր-հայտի Սկզբնական ժամկետից, եթե այլ գրավոր պայմանավորվածություն ձեռք չի բերվել Կողմերի միջև:

3.3.3.

3.4. Պատվիրատուն պարտավոր է՝

3.4.1. Վճարել Ծառայությունների դիմաց ըստ սույն Պայմանագրի և համապատասխան Պատվեր-Հայտ(եր)ի պայմանների:

3.4.2. Օգտագործել իրեն մատուցվող Ծառայությունները և դրանց առնչվող սարքավորումները այնպես, որպեսզի չընդհատի, խոչընդոտներ չառաջացնի կամ չթերացնի Օպերատորի ցանցով մատուցվող Ծառայությունները, չթերացնի այդ ցանցով հաղորդվող տեղեկատվության գաղտնիության պահպանումը, վնաս չհասցնի Օպերատորին կամ Օպերատորի Ծառայություններից օգտվող այլ անձանց, վտանգ չստեղծի մարդկանց կյանքի և առողջության համար:

3.4.3. Չկատարել Օպերատորի տրամադրած սարքավորումների կամ մալուխի որևէ ձևափոխություն:

3.4.4. Համագործակցել Օպերատորի հետ, երբ այդպիսի համագործակցությունը անհրաժեշտ է ապահովելու համար Ծառայությունների մատուցումը և Ծառայությունների մատուցման հետ կապված խնդիրների վերացումը:

3.4.5. Չօգտագործել Ծառայությունը և/կամ Օպերատորի ցանցը գործող օրենսդրության խախտմամբ կամ անօրինական նպատակներով:

3.4.6. Չառաջարկել իրեն մատուցված Ծառայությունը (հատուցմամբ կամ անհատույց) երրորդ անձանց, ինչպես նաև չօգտագործել այն այլ էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու նպատակով:

3.4.7. Պահպանել Օպերատորի բարի համբավը և առևտրային իմիջը սույն Պայմանագրի գործողության ընթացքում և սույն Պայմանագրի լուծումից հետո:

3.4.8. Պատվիրատուն պարտավորվում է շահագործել Օպերատորի կողմից տրամադրված և վերջինիս սեփականությունը հանդիսացող սարքավորումները համաձայն տեխնիկական շահագործման կանոնների.

- UPS կայունացնող սարքի առկայություն,
- Կլիմայի վերահսկողության (climate control) համակարգ, որը պահպանում է օպտիմալ ջերմաստիճանային ռեժիմ գրասենյակ/շենք/շինության ներսում տեղադրվող սարքավորման անխափան աշխատանքի համար,
- Տեղադրված սարքավորման նկատմամբ Օպերատորի մասնագետների հասանելիության /համագործակցության/ ապահովում,
- Սարքավորման պահպանության ապահովում:

3.4.9. Պայմանագրի և դրա համապատասխան Պատվեր-Հայտ(եր)ի դադարեցումից հետո, սարքավորումերի հանձնման-ընդունման ակտերի համաձայն, Պատվիրատուին հանձնված սարքավորումները 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել Օպերատորին:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՆԸ, ՀԱՇԻՎՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

4.1. Յուրաքանչյուր Ծառայության գինը սահմանվում է Օպերատորի կողմից և նշվում համապատասխան Ծառայության Պատվեր-Հայտում:

4.2. Եթե Ծառայության մատուցման առաջին և/կամ վերջին ամիսները չեն հանդիսանում ամբողջական օրացուցային ամիսներ, ամսական վճարը հաշվարկվում է տվյալ օրացուցային ամսվա ընթացքում մատուցված Ծառայության օրերին համամասնորեն:

4.3. Ծառայության դիմաց վճարումները կատարվում են Օպերատորի կողմից ներկայացվող հարկային և/կամ փոխանցման հաշիվների հիման վրա՝ ըստ համապատասխան Ծառայության Պատվեր-Հայտ(եր)ում նշված ժամանակացույց(եր)ի:

4.4. Օպերատորը ներկայացնում է էլեկտրոնային հարկային հաշիվներ: Օպերատորն իրավասու է նաև հաստատել նշված փաստաթղթերը ֆաքսիմիլային ստորագրությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ֆաքսիմիլային կնիքով: Վճարումը համարվում է կատարված այն օրը, երբ վճարման ենթակա ողջ գումարը մուտքագրվել է սույն Պայմանագրում նշված Օպերատորի բանկային հաշվին:

4.5. Ծառայության դիմաց վճարները հաշվարկվում են Ծառայության ակտիվացման օրվանից սկսած:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև սույն Պայմանագրով սահմանված կարգով դրա լուծումը:

6. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6.1. Սույն Պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուն իրավասու է Պատվեր-Հայտեր ներկայացնել Օպերատորին, համաձայն սույն Պայմանագրի պայմանների: Պատվեր-Հայտերից յուրաքանչյուրն ուժի մեջ կմտնի Պատվիրատուի և Օպերատորի կողմից այն ստորագրելու պահից և կգործի դրանում նշված Ծառայության Սկզբնական Ժամկետի ընթացքում:

6.2. Եթե սույն Պայմանագրի գործողության ընթացքում, մինչև Պատվեր-Հայտի Սկզբնական Ժամկետի ավարտը, Կողմերից որևէ մեկը գրավոր ծանուցում չուղարկի մյուս Կողմին Սկզբնական Ժամկետը լրանալուց հետո տվյալ Պատվեր-Հայտի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին Սկզբնական Ժամկետը լրանալու ամսաթվից ոչ պակաս, քան 10 (տասը) օր առաջ, ապա Պատվեր-Հայտի գործողության ժամկետը ավտոմատ կերպով կերկարաձգվի Հերթական Ժամկետով, որի տևողությունը հավասար կլինի Սկզբնական Ժամկետին: Եթե, սույն Պայմանագրի գործողության ընթացքում, մինչև յուրաքանչյուր Հերթական Ժամկետի ավարտը Կողմերից որևէ մեկը գրավոր ծանուցում չուղարկի մյուս Կողմին Հերթական Ժամկետը լրանալուց հետո տվյալ Պատվեր-Հայտի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին Հերթական Ժամկետը լրանալու ամսաթվից ոչ պակաս, քան 10 (տասը) օր առաջ, ապա Պատվեր-Հայտի գործողության ժամկետը ավտոմատ կերպով կերկարաձգվի նոր Հերթական Ժամկետով:

6.3. Եթե Պատվեր-Հայտի Սկզբնական Ժամկետի ընթացքում Պատվիրատուն ժամանակավոր կասեցնում է մատուցվող Ծառայությունները կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցումը կասեցվում է Օպերատորի կողմից, ապա Պատվեր-Հայտի Սկզբնական Ժամկետը երկարաձգվում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

7.1. Օպերատորն իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը և/կամ Պատվեր-Հայտ(եր)ը, եթե՝

7.1.1. Պատվիրատուի կողմից խախտվել է սույն Պայմանագրի 4.3 կետը:
7.1.2. Պատվիրատուն ցանցին է միացրել չսերտիֆիկացված վերջնակետային սարքավորումներ:
7.1.3. Պատվիրատուն վնասել է Օպերատորի տրամադրած սարքավորումները կամ մալուխը:
7.1.4. Պատվիրատուն խախտել է սույն պայմանագրի 3.4.5 և 3.4.6 կետերում նախատեսված իր պարտավորությունները:

7.2. Պատվիրատուն իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը և/կամ Պատվեր-Հայտ(եր)ը, եթե՝

7.2.1. Օպերատորի կողմից կատարվել է Ծառայության սակագնի բարձրացում ավելի քան 20 (քսան) տոկոսով, համաձայն սույն Պայմանագրի 3.1.1 և 3.1.2 կետերի: Այս հիմքով Պայմանագրի և/կամ Պատվեր-Հայտ(եր)ի լուծման դեպքում Պատվիրատուն լուծման մասին ծանուցումը Օպերատորին պետք է ուղարկի լուծման օրվանից առնվազն 5 (հինգ) օր առաջ:
7.3. Կողմերը կարող են լուծել Պատվեր-Հայտը և/կամ Պայմանագիրը՝ դրա լուծումից առնվազն 30 (երեսուն) օր առաջ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Կողմին, բայց ոչ ավելի վաղ, քան մինչև այդ պահին գործող Պատվեր-Հայտ(եր)ի Սկզբնական ժամկետի ավարտը:
7.4. Սույն Պայմանագրի 7.1, 7.2 և 7.3 կետերում նշված հիմքերով Պայմանագրի և/կամ Պատվեր-Հայտ(եր)ի լուծման դեպքում Օպերատորը կազատվի սույն Պայմանագրով և/կամ համապատասխան Պատվեր-Հայտ(եր)ով ամրագրված իր բոլոր պարտավորություններից, իսկ Պատվիրատուն կազատվի սույն Պայմանագրով և/կամ համապատասխան Պատվեր-Հայտ(եր)ով ամրագրված իր բոլոր պարտավորություններից, բացառությամբ մինչև սույն Պայմանագրի և/կամ Պատվեր-Հայտ(եր)ի լուծման օրը ներառյալ մատուցված Ծառայությունների դիմաց վճարման պարտավորությունների:
7.5. Պայմանագիրը և/կամ Պատվեր-Հայտ(եր)ը կարող է վաղաժամկետ (մինչև Սկզբնական Ժամկետի ավարտը) լուծվել նաև Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:
7.6. Պատվիրատուի նախաձեռնությամբ Պատվեր-Հայտի և/կամ Պայմանագրի լուծման դեպքում, եթե Պատվեր-Հայտի և/կամ Պայմանագրի լուծումը պայմանավորված չէ սույն Պայմանագրի 7.2 և 7.5 կետերում նշված հանգամանքներից որևէ մեկով, ապա սույն 7.6 կետի համաձայն Պատվեր-Հայտի և/կամ Պայմանագրի լուծման դեպքում Պատվիրատուն պարտավոր է Պատվեր-Հայտի և/կամ Պայմանագրի լուծման օրվան հաջորդող 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Օպերատորին վճարել հրաժարագին, որի գումարը հավասար կլինի այն գումարին, որը Պատվիրատուն պարտավոր կլիներ վճարել Օպերատորին՝ Պատվեր-Հայտի և/կամ Պայմանագրի լուծման օրվանից մինչև Սկզբնական Ժամկետի ավարտը ընկած ժամանակահատվածում Պատվեր-Հայտում և/կամ Պայմանագրում նկարագրված Ծառայության դիմաց, եթե Պատվեր-Հայտը և/կամ Պայմանագիրը վաղաժամկետ չլուծվեր: Սույն 7.6 կետը չի վերաբերվում այն Պատվեր-Հայտ(եր)ին, որոնց լուծման փոխարեն միացվում է մեկ այլ միացման կետ:
7.7. Այն պարագայում, երբ կնքվել է Պատվեր-Հայտը, սակայն մինչև Ծառայության ակտիվացումը Պատվիրատուն ցանկանում է լուծել այդ Պատվեր-Հայտը և/կամ Պայմանագիրը, ապա Պատվիրատուն պարտավորվում է վճարել Օպերատորի կողմից կատարված բոլոր ծախսերը, որը վերջինս կատարել է տվյալ Պատվեր-Հայտով նախատեսված Ծառայությունների հասանելիությունն ապահովելու համար:

8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Այն դեպքում, երբ Օպերատորի կողմից տրամադրված սարքավորումը և (կամ) Ծառայությունների մատուցման տարածքում գտնվող մալուխը վնասված է կամ բացակայում է Պատվիրատուի մեղքով, այն է, եթե Պատվիրատուի կողմից պատշաճ չի իրականացվել Ծառայությունների մատուցման տարածքի անվտանգությունը, ապա Պատվիրատուն պարտավոր է հատուցել դրա արդյունքում Օպերատորին պատճառված վնասը, որի համար Պատվիրատուն պարտավոր է վճարել այն վերականգնելու աշխատանքների համար ծախսված գումարը, որը կազմում է 1 (մեկ) ժամը 3000 (երեք հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն և մալուխը վերականգնելու համար

ծախսված նյութերի արժեքը, իսկ այն դեպքում, երբ մալուխը բացակայում է, Պատվիրատուն պարտավոր է վճարել հավելյալ գումար աշխատանքների վճարին՝ բացակայող մալուխի յուրաքանչյուր 1 (մեկ) մետրի համար 3000 (երեք հազար) ՀՀ դրամ գումարած ԱԱՀ-ն, իսկ սարքավորման համար փոխհատուցման արժեքը գրված է սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող սարքավորումների հանձնման-ընդունման ակտում:

8.2. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի առջև Ծառայությունների ընդհատումների, խափանումների և որակական ցուցանիշների անկման դեպքում, որոնց ծագման պատճառները ընկած են Օպերատորի վերահսկողությունից դուրս գտնվող տարածքներում, ինչը առանց սահմանափակումների ներառում է այն հեռահաղորդակցության միջոցների խափանումները և սերվերների անհասանելիությունը, որոնք գտնվում են Օպերատորի կողմից շահագործվող ցանցի սահմաններից դուրս:

8.4. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Ծառայությունների կիրառման արդյունքում փոխանակված տեղեկատվության բովանդակության, ճշմարտացիության, օրինականության, անվտանգության, գաղտնիության և որակի համար:

8.5. Օպերատորը հանձնում է, իսկ Պատվիրատուն ընդունում է սարքավորումներ, որոնց համար կրում է համապատասխան նյութական պատասխանատվություն մինչև Ծառայությունների մատուցման ավարտը, համաձայն Սարքավորումների հանձնման-ընդունման ակտերում նշված նյութական պատասխանատվության սահմանաչափերի: Սարքավորումների վնասվելու դեպքում, եթե դա տեղի է ունեցել ոչ Պատվիրատուի մեղքով՝ գործողության կամ անգործության հետևանքով, վերջիններս ենթակա են փոխարինման Օպերատորի կողմից:

9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և/կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պայթյունները, պատերազմը (հայտարարված կամ չհայտարարված), ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել սույն Պայմանագիրը և/կամ համապատասխան Պատվեր-Հայտ(եր)ը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է համաձայն ՀՀ օրենսդրության՝ ՀՀ դատական համակարգի միջոցով:

11. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Պայմանագրին, Պայմանագրի պայմաններին, Պայմանագրից բխող գործողություններին համապատասխան Պատվեր-Հայտ(եր)ին կամ Պայմանագրի բանակցություններին առնչվող Կողմերի միջև փոխանակված ողջ տեղեկատվությունը, բացառությամբ զանգվածային լրատվության միջոցներին կողմերի համաձայնությամբ տրամադրված տեղեկատվության, գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի:

12. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

Կողմերի կոնտակտային տվյալները և բանկային վավերապայմանները նշված են սույն Պայմանագրում: Կողմերի միջև դիմումները, ծանուցումները և այլ տեղեկատվություն պետք է ուղարկվեն սույն Պայմանագրում նշված հասցեներով: Կողմերի անվանման, հասցեների, կոնտակտային տվյալների և բանկային վավերապայմանների փոփոխությունները սույն Պայմանագրում կատարվում են մյուս Կողմին ուղղված գրավոր ծանուցմամբ՝ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ:

13. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Երբ Պատվիրատուն կարծում է, որ տեղի է ունեցել Ծառայության խափանում, ապա պետք է բացի «Խափանման հայտ»՝ զանգելով Օպերատորի կողմից նշված **«Հաճախորդի աջակցման» համարին՝ +374 60 46 99 55** (համարը չպատասխանելու դեպքում զանգել **+374 91 512 884**), և նշի հետևյալ գաղտնաբառը **(2602)** , ինչին պետք է հետևի համապատասխան էլեկտրոնային նամակը հետևյալ հասցեով՝ helpdesk@rtarmenia.am :

Օպերատորի՝ Հաճախորդների աջակցման ծառայությունը հասանելի է Պատվիրատուին շաբաթական 7 (յոթ) օր, օրական 24 (քսանչորս) ժամ:

«Խափանման հայտի» նախաձեռնությունը պետք է ամբողջովին պատկանի Պատվիրատուին: Օպերատորի տեխնիկական աշխատողը պետք է բացի «Խափանման հայտ» և հայտնի այդ հայտի համարը Պատվիրատուին կատարած զանգի ընթացքում, ինչին պետք է հետևի էլեկտրոնային նամակ hovhannes.manukyan@1tv.am հասցեով: Պատվիրատուի կողմից Օպերատորի helpdesk@rtarmenia.am էլեկտրոնային հասցեին կարող է ուղարկվել նաև սարքավորման “alarm-report”-ը:

«Խափանման հայտը» բացելուց անմիջապես հետո Օպերատորի համապատասխան ստորաբաժանումը պետք է նախաձեռնի դիագնոստիկ ստուգում և խափանման մեկուսացմանն ուղղված գործողություններ որոշելու համար խափանման աղբյուրը և լրջությունը: Եթե պարզվի, որ տեղի ունեցած խափանումը հանգեցրել է Ծառայության ընդհատմանը կամ սահմանափակմանը կամ այլ խնդիրների Օպերատորի մեղքով, վերջինս կստանձնի խափանման վերացման պարտականությունը: Խափանումը կհամարվի ավարտված, երբ Ծառայության մատուցումը ամբողջովին վերականգնվի:

Խափանման վերացումից անմիջապես հետո Օպերատորի՝ «Հաճախորդի աջակցման» աշխատողը պետք է զանգահարի Պատվիրատուի կողմից նշանակված համարին՝ +374 **93 972 977** և վերահաստատի միջադեպի ավարտը և խափանման տևողությունը: Այդ զանգի ընթացքում Օպերատորի աշխատողը պետք է տեղեկացնի Պատվիրատուին «Խափանման հայտի» փակման մասին, ինչին պետք է հետևի էլեկտրոնային նամակ hovhannes.manukyan@1tv.am հասցեով, որը կընդգրկի նաև տեղեկություն խափանման սկզբի և ավարտի ժամկետների վերաբերյալ: Պատվիրատուն պետք է հաստատի խափանման հայտի փակումը էլեկտրոնային նամակով:

Խափանման տևողությունը կհաշվարկվի սկսած Պատվիրատուի կողմից «Խափանման հայտի» նախաձեռնման զանգի պահից մինչև խափանման վերացման պահը: Խափանման վերացման ժամանակը կարող է հաստատվել նաև սարքավորման «alarm-report»-ի հիման վրա, որը Պատվիրատուի կողմից կուղարկվի Օպերատորի էլեկտրոնային հասցեին helpdesk@rtarmenia.am :

«Խափանման հայտի» հետ կապված խնդիրները չլուծվելու դեպքում Կողմերը կարող են դիմել հետևյալ աշխատողներին.

Օպերատորի դեպքում. helpdesk@rtarmenia.am, հեռ. +374 60 469955

14. ԿՈՂՄԵՐԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Գործունեություն	Օպերատոր	Պատվիրատու
Կոմերցիա	Ք. Հակոբյան Կորպորատիվ վաճառքի դեպարտամենտի ղեկավար Հեռ. +374 60 46 99 88; Բջջ. +374 98 21 00 69 ch.hakobyan@rtarmenia.am	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ Հեռ. +374 10 650015 support@armtv.com
Տեխնիկական	Հաճախորդների տեխնիկական աջակցման կենտրոն Հեռ.+374 60 469955 helpdesk@rtarmenia.am	Հովհաննես Մանուկյան Հեռ.+374 94 88 99 06 hovhannes.manukyan@1tv.am
Ֆինանսական դեպարտամենտ	Իրինա Կաջոյան Հեռ.+374 60 469924 I.kajoyan@rtarmenia.am Յուրի Ճշմարիտյան Հեռ.+374 60 469714 y.chshmarityan@rtarmenia.am	Օֆելյա Գյոդակյան Հեռ.+37491586680 ofelya.geodakyan@1tv.am

Մատուցվող Ծառայության նպատակից ելնելով Կողմերը որոշեցին ֆիքսել Պայմանագրի գործողության ընթացքում Օպերատորի կողմից Ծառայության անխափանության ապահովման համար պատասխանատու անձանց հերթապահության գրաֆիկը, այն է՝

Ցանցային կառավարման բաժին

06.12.2022 - Արտակ Թառումյան (օրվա 1-ի կես), Արամ Հայրապետյան (օրվա 2-րդ կես)
09.12.2022 - Արտավազդ Հակոբջանյան (օրվա 1-ի կես), Թագվոր Փաշայան (օրվա 2-րդ կես)
10.12.2022 - Արամ Հայրապետյան (օրվա 1-ի կես), Արտակ Թառումյան (օրվա 2-րդ կես)
11.12.2022 - Թագվոր Փաշայան (օրվա 1-ի կես), Արտավազդ Հակոբջանյան (օրվա 2-րդ կես)

ԷՄՓԻԷԼԷՍ ցանցի կառուցման բաժին

06/12/2022, 10/12/2022 – Էդգար Գասպարյան, Կարեն Ղազարյան
09/12/2022, 11/12/2022 – Գրիգոր Մելքոնյան, Աբրահամ Աբրահամյան

15. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15.1. Սույն Պայմանագրին կցված և Կողմերի կողմից ստորագրված ակտերը և Պատվեր-Հայտերը հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը: Սույն Պայմանագրի, ակտերի և Պատվեր-Հայտերի դրույթների միջև հակասությունների առկայության դեպքում նշված փաստաթղթերի գերակայությունը սահմանվում է հետևյալ հերթականությամբ՝

- Պատվեր-Հայտեր (բարձրագույն գերակայություն),

- Սույն Պայմանագիր,
- Ակտեր:

15.2. Սույն Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները պետք է լինեն գրավոր և երկկողմանի ստորագրված:

15.3. Կողմերի կատարված բոլոր ծանուցումները պատշաճ են համարվում, եթե կատարվել են գրավոր՝ էլ. փոստի կամ նամակի միջոցով սույն Պայմանագրում նշված հասցեներով, հայերեն լեզվով:

15.4. Սույն Պայմանագրի բաժինների վերնագրերը միայն հարմարության համար են և չեն կարող որևէ կերպ ազդել սույն Պայմանագրի դրույթների իմաստի մեկնաբանման վրա:

15.5. Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Կողմերին տրվում է մեկական օրինակ:

16. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Օպերատոր	Պատվիրատու
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ Հասցե՝ ք. Աբովյան, Խաղաղության 1 Հեռ. (+37460) 46 99 01 Էլ.հասցե՝ info@rtarmenia.am ՀՎՀՀ 00096001 «Կոնվերս բանկ» ՓԲԸ Հ/Հ 19300-11980040100 Հ. Ֆարամազյան Գլխավոր տնօրեն (ստորագրություն) Կ. Տ.	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 26 Հեռ. +374 94889906, +374 10 650015 Էլ.հասցե՝hovhannes.manukyan@1tv.am ՀՎՀՀ 01540062 «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ 2050022082671001 Հ. Մովսիսյան Գործադիր տնօրեն (ստորագրություն) Կ. Տ.

Rostelecom

ՊԱՏՎԵՐ-ՀԱՅՏ ԹԻՎ 01
Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի

«14»Նոյեմբերի 2022թ.

1. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով, կնքեցին սույն Պատվեր-հայտը հետևյալ բովանդակությամբ.

Ծառայությունը	
Ծառայության մատուցման նկարագիրը	Ինտերնետ հասանելիություն
Ծառայության մատուցման հասցե	ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
Թողունակությունը	1 գբ/վ, /24 static real IP ցանցի տրամադրում
Ծառայության մատուցման Ժամկետը	
Ծառայության մատուցման Սկզբնական Ժամկետը	Ծառայությունների ակտիվացման օրվանից մինչև 12.12.2022թ.: Պատվեր-Հայտի կնքման օրվանից հետո առավելագույնը 15 օրվա ընթացքում Պատվիրատուն թույլատրում է Օպերատորին մտնել Ծառայության մատուցման հասցե, իսկ Պատվիրատուի կողմից համապատասխան Ծանուցումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորը սկսում է Ծառայության հասանելիության ապահովման աշխատանքները:
Ծառայության ակտիվացման ցանկալի օրը	Ծառայության ակտիվացման փաստացի օրը կորոշվի համաձայն Ծառայության Ակտիվացման Ակտի
Ծառայության գինը	
Ծառայության մատուցման վճարը	Առանց ԱԱՀ՝ **608 333** ՀՀ դրամ, ԱԱՀ՝ **121 667** ՀՀ դրամ, Ընդամենը ԱԱՀ-ով՝ **730 000** ՀՀ դրամ:
Վճարումների ժամանակացույցը	
Պատվեր-Հայտում նշված ծառայությունների վճարը	Հարկային հաշիվը ներկայացվում է Ծառայության մատուցումից հետոՊատվիրատուն հաշիվը վավերացնում է էլեկտրոնային ստորագրությամբ «e-invoicing» համակարգում: Վճարումը կատարվում է Ծառայությունների մատուցումից հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

2. Սույն Պատվեր-հայտը հանդիսանում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Այն ամենն ինչ կարգավորված չէ սույն Պատվեր-հայտով, կարգավորվում է Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով:
4. Սույն Պատվեր-հայտը կազմված է 2 (երկու) իրավահավասարազոր օրինակից, հայերեն լեզվով, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

Օպերատոր	**Պատվիրատու**
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ Հ. Ֆարամազյան Գլխավոր տնօրեն (ստորագրություն) Կ. S.	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ Հ. Մովսիսյան Գործադիր տնօրեն (ստորագրություն) Կ. S.

Rostelecom

ՊԱՏՎԵՐ-ՀԱՅՏ ԹԻՎ 02
Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի

«14»Նոյեմբերի 2022թ.

1. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով, կնքեցին սույն Պատվեր-հայտը հետևյալ բովանդակությամբ.

Ծառայությունը	
Ծառայության մատուցման նկարագիրը	Ինտերնետ հասանելիություն
Ծառայության մատուցման հասցե	ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
Թողունակությունը	1 գբ/վ, /29 static real IP ցանցի տրամադրում
Ծառայության մատուցման Ժամկետը	
Ծառայության մատուցման Սկզբնական Ժամկետը	Ծառայությունների ակտիվացման օրվանից մինչև 12.12.2022թ.: Պատվեր-Հայտի կնքման օրվանից հետո առավելագույնը 15 օրվա ընթացքում Պատվիրատուն թույլատրում է Օպերատորին մտնել Ծառայության մատուցման հասցե, իսկ Պատվիրատուի կողմից համապատասխան Ծանուցումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորը սկսում է Ծառայության հասանելիության ապահովման աշխատանքները:
Ծառայության ակտիվացման ցանկալի օրը	Ծառայության ակտիվացման փաստացի օրը կորոշվի համաձայն Ծառայության Ակտիվացման Ակտի
Ծառայության գինը	
Ծառայության մատուցման վճարը	Առանց ԱԱՀ՝ **583 333** ՀՀ դրամ, ԱԱՀ՝ **116 667** ՀՀ դրամ, Ընդամենը ԱԱՀ-ով՝ **700 000** ՀՀ դրամ:
Վճարումների ժամանակացույցը	
Ամսական վճար	Հարկային հաշիվը ներկայացվում է Ծառայության մատուցումից հետոՊատվիրատուն հաշիվը վավերացնում է էլեկտրոնային ստորագրությամբ «e-invoicing» համակարգում: Վճարումը կատարվում է Ծառայությունների մատուցումից հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

2. Սույն Պատվեր-հայտը հանդիսանում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Այն ամենն ինչ կարգավորված չէ սույն Պատվեր-հայտով, կարգավորվում է Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով:
4. Սույն Պատվեր-հայտը կազմված է 2 (երկու) իրավահավասարազոր օրինակից, հայերեն լեզվով, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

Օպերատոր	**Պատվիրատու**
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ Հ. Ֆարամազյան Գլխավոր տնօրեն (ստորագրություն) Կ. S.	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ Հ. Սովսիսյան Գործադիր տնօրեն (ստորագրություն) Կ. S.

Rostelecom

ՊԱՏՎԵՐ-ՀԱՅՏ ԹԻՎ 03
Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի

«14»Նոյեմբերի 2022թ.

1. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով, կնքեցին սույն Պատվեր-հայտը հետևյալ բովանդակությամբ.

Ծառայությունը	
Ծառայության մատուցման նկարագիրը	Ինտերնետ հասանելիություն-1
Ծառայության մատուցման հասցե	ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
Թողունակությունը	100 մբ/վ, DHCP /32 IP ցանցի տրամադրում
Ծառայության մատուցման Ժամկետը	
Ծառայության մատուցման Սկզբնական Ժամկետը	Ծառայությունների ակտիվացման օրվանից մինչև 12.12.2022թ.: Պատվեր-Հայտի կնքման օրվանից հետո առավելագույնը 15 օրվա ընթացքում Պատվիրատուն թույլատրում է Օպերատորին մտնել Ծառայության մատուցման հասցե, իսկ Պատվիրատուի կողմից համապատասխան Ծանուցումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորը սկսում է Ծառայության հասանելիության ապահովման աշխատանքները:
Ծառայության ակտիվացման ցանկալի օրը	Ծառայության ակտիվացման փաստացի օրը կորոշվի համաձայն Ծառայության Ակտիվացման Ակտի
Ծառայության գինը	
Ծառայության մատուցման վճարը	Առանց ԱԱՀ՝ **83 333** ՀՀ դրամ, ԱԱՀ՝ **16 667** ՀՀ դրամ, Ընդամենը ԱԱՀ-ով՝ **100 000** ՀՀ դրամ:
Վճարումների ժամանակացույցը	
Ամսական վճար	Հարկային հաշիվը ներկայացվում է Ծառայության մատուցումից հետոՊատվիրատուն հաշիվը վավերացնում է էլեկտրոնային ստորագրությամբ «e-invoicing» համակարգում: Վճարումը կատարվում է Ծառայությունների մատուցումից հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

2. Սույն Պատվեր-հայտը հանդիսանում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Այն ամենն ինչ կարգավորված չէ սույն Պատվեր-հայտով, կարգավորվում է Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով:
4. Սույն Պատվեր-հայտը կազմված է 2 (երկու) իրավահավասարազոր օրինակից, հայերեն լեզվով, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

Օպերատոր	**Պատվիրատու**
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ Հ. Ֆարամազյան Գլխավոր տնօրեն (ստորագրություն) Կ. Տ.	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ Հ. Մովսիսյան Գործադիր տնօրեն (ստորագրություն) Կ. Տ.

Rostelecom

ՊԱՏՎԵՐ-ՀԱՅՏ ԹԻՎ 04
Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի

«14»Նոյեմբերի 2022թ.

1. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով, կնքեցին սույն Պատվեր-հայտը հետևյալ բովանդակությամբ.

Ծառայությունը	
Ծառայության մատուցման նկարագիրը	Ինտերնետ հասանելիություն-2
Ծառայության մատուցման հասցե	ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
Թողունակությունը	100 մբ/վ, DHCP /32 IP ցանցի տրամադրում
Ծառայության մատուցման Ժամկետը	
Ծառայության մատուցման Սկզբնական Ժամկետը	Ծառայությունների ակտիվացման օրվանից մինչև 12.12.2022թ.: Պատվեր-Հայտի կնքման օրվանից հետո առավելագույնը 15 օրվա ընթացքում Պատվիրատուն թույլատրում է Օպերատորին մտնել Ծառայության մատուցման հասցե, իսկ Պատվիրատուի կողմից համապատասխան Ծանուցումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորը սկսում է Ծառայության հասանելիության ապահովման աշխատանքները:
Ծառայության ակտիվացման ցանկալի օրը	Ծառայության ակտիվացման փաստացի օրը կորոշվի համաձայն Ծառայության Ակտիվացման Ակտի
Ծառայության գինը	
Ծառայության մատուցման վճարը	Առանց ԱԱՀ՝ **83 333** ՀՀ դրամ, ԱԱՀ՝ **16 667** ՀՀ դրամ, Ընդամենը ԱԱՀ-ով՝ **100 000** ՀՀ դրամ:
Վճարումների ժամանակացույցը	
Ամսական վճար	Հարկային հաշիվը ներկայացվում է Ծառայության մատուցումից հետոՊատվիրատուն հաշիվը վավերացնում է էլեկտրոնային ստորագրությամբ «e-invoicing» համակարգում: Վճարումը կատարվում է Ծառայությունների մատուցումից հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

2. Սույն Պատվեր-հայտը հանդիսանում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Այն ամենն ինչ կարգավորված չէ սույն Պատվեր-հայտով, կարգավորվում է Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով:
4. Սույն Պատվեր-հայտը կազմված է 2 (երկու) իրավահավասարազոր օրինակից, հայերեն լեզվով, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

Օպերատոր	**Պատվիրատու**
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ Հ. Ֆարամազյան Գլխավոր տնօրեն (ստորագրություն) Կ. Տ.	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ Հ. Մովսիսյան Գործադիր տնօրեն (ստորագրություն) Կ. Տ.

Rostelecom

ՊԱՏՎԵՐ-ՀԱՅՏ ԹԻՎ 05
Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի

«14»Նոյեմբերի 2022թ.

1. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով, կնքեցին սույն Պատվեր-հայտը հետևյալ բովանդակությամբ.

Ծառայությունը	
Ծառայության մատուցման նկարագիրը	**DDoS պաշտպանության ծառայության տրամադրում**
Ծառայության մատուցման հասցե	ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
Թողունակությունը	
Ծառայության մատուցման Ժամկետը	
Ծառայության մատուցման Սկզբնական Ժամկետը	Ծառայությունների ակտիվացման օրվանից մինչև 12.12.2022թ.: Պատվեր-Հայտի կնքման օրվանից հետո առավելագույնը 15 օրվա ընթացքում Պատվիրատուն թույլատրում է Օպերատորին մտնել Ծառայության մատուցման հասցե, իսկ Պատվիրատուի կողմից համապատասխան Ծանուցումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորը սկսում է Ծառայության հասանելիության ապահովման աշխատանքները:
Ծառայության ակտիվացման ցանկալի օրը	Ծառայության ակտիվացման փաստացի օրը կորոշվի համաձայն Ծառայության Ակտիվացման Ակտի
Ծառայության գինը	
Ծառայության մատուցման վճարը	Առանց ԱԱՀ՝ **166 667** ՀՀ դրամ, ԱԱՀ՝ **33 333** ՀՀ դրամ, Ընդամենը ԱԱՀ-ով՝ **200 000** ՀՀ դրամ:
Վճարումների ժամանակացույցը	
Ամսական վճար	Հարկային հաշիվը ներկայացվում է Ծառայության մատուցումից հետոՊատվիրատուն հաշիվը վավերացնում է էլեկտրոնային ստորագրությամբ «e-invoicing» համակարգում: Վճարումը կատարվում է Ծառայությունների մատուցումից հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

2. Սույն Պատվեր-հայտը հանդիսանում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Այն ամենն ինչ կարգավորված չէ սույն Պատվեր-հայտով, կարգավորվում է Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով:
4. Սույն Պատվեր-հայտը կազմված է 2 (երկու) իրավահավասարազոր օրինակից, հայերեն լեզվով, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

Օպերատոր	**Պատվիրատու**
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ Հ. Ֆարամազյան Գլխավոր տնօրեն	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ Հ. Մովսիսյան Գործադիր տնօրեն
(ստորագրություն) Կ. Տ.	(ստորագրություն) Կ. Տ.

Rostelecom

ՊԱՏՎԵՐ-ՀԱՅՏ ԹԻՎ 06
Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի

«14»Նոյեմբերի 2022թ.

1. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով, կնքեցին սույն Պատվեր-հայտը հետևյալ բովանդակությամբ.

Ծառայությունը	
Ծառայության մատուցման նկարագիրը	Մութ մանրաթելի տրամադրում 2 հասցեների միջև
Ծառայության մատուցման հասցե	ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
Ծառայության մատուցման Ժամկետը	
Ծառայության մատուցման Սկզբնական Ժամկետը	Ծառայությունների ակտիվացման օրվանից մինչև 12.12.2022թ.: Պատվեր-Հայտի կնքման օրվանից հետո առավելագույնը 15 օրվա ընթացքում Պատվիրատուն թույլատրում է Օպերատորին մտնել Ծառայության մատուցման հասցե, իսկ Պատվիրատուի կողմից համապատասխան Ծանուցումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորը սկսում է Ծառայության հասանելիության ապահովման աշխատանքները:
Ծառայության ակտիվացման ցանկալի օրը	Ծառայության ակտիվացման փաստացի օրը կորոշվի համաձայն Ծառայության Ակտիվացման Ակտի
Ծառայության գինը	
Ծառայության մատուցման վճարը	Առանց ԱԱՀ՝ **500 000** ՀՀ դրամ, ԱԱՀ՝ **100 000** ՀՀ դրամ, Ընդամենը ԱԱՀ-ով՝ **600 000** ՀՀ դրամ:
Վճարումների ժամանակացույցը	
Ամսական վճար	Հարկային հաշիվը ներկայացվում է Ծառայության մատուցումից հետոՊատվիրատուն հաշիվը վավերացնում է էլեկտրոնային ստորագրությամբ «e-invoicing» համակարգում: Վճարումը կատարվում է Ծառայությունների մատուցումից հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

2. Սույն Պատվեր-հայտը հանդիսանում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Այն ամենն ինչ կարգավորված չէ սույն Պատվեր-հայտով, կարգավորվում է Կողմերի միջև «14» Նոյեմբերի 2022թ. կնքված թիվ C2602 Ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթներով:
4. Սույն Պատվեր-հայտը կազմված է 2 (երկու) իրավահավասարազոր օրինակից, հայերեն լեզվով, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

Օպերատոր	**Պատվիրատու**
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ Հ. Ֆարամազյան Գլխավոր տնօրեն (ստորագրություն) Կ.Տ.	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ Հ. Սովսիսյան Գործադիր տնօրեն (ստորագրություն) Կ. Տ.